25 օգոստոսի 2011 թվականի N 1205 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 502-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20-ի «Օտարերկրյա անձանց կողմից «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» և «Վերաներմուծում» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքների բնաիրային չափերը սահմանելու մասին» N 502-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը 1-ին կետը և հավելվածը «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» բառերից հետո լրացնել «Ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» բառերով.

2) որոշման հավելվածի աղյուսակում՝

ա. ԱՏԳ ԱԱ-ի «26-րդ», «28-րդ», «29-րդ»,«36-րդ», «7102-րդ», «81-րդ» և «87-րդ» տողերի բնաիրային չափը գերազանցող մասի նկատմամբ սահմանված՝ ապրանքների ակնհայտ առևտրային քանակությունը փոխարինել համապատասխանաբար «0»-ով,

բ. ԱՏԳ ԱԱ-ի «07-րդ» և «08-րդ» տողերը երրորդ սյունակի «50 կգ» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «յուրաքանչյուր տեսակից» բառերով,

գ. «Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի» 87-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով՝

8702	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 և ավելի մարդկանց՝ ներառյալ վարորդը, տեղափոխման համար	1 հատ
8703	Մարդատար ավտոմեքենաներ և այլ շարժիչային տրանսպորտային միջոցներ, նախատեսված մասնավորապես մարդկանց տեղափոխելու համար (բացի 8702 ապրանքային դիրքում դասակարգված ավտոմեքենաներից)՝ ներառյալ բեռնատուղևորատար ֆուրգոն-ավտոմեքենաները և մրցարշավային ավտոմեքենաները	1 հատ
8704	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռները տեղափոխելու համար	1 հատ
8705	Շարժիչային տրանսպորտային միջոցներ, հատուկ նշանակության, բացի ուղևորների կամ բեռների տեղափոխման համար օգտագործվողներից (օրինակ՝ բեռնատար ավտոմեքենաներ՝ վթարային նորոգման համար, ավտոամբարձիչներ, հրշեջ տրանսպորտային միջոցներ, ավտոբետոնախառնիչներ, ճանապարհները մաքրող, ջրող ավտոմեքենաներ, ավտոարհեստանոցներ, ռենտգենյան կայանքներով ավտոմեքենաներ)	1 հատ
8711	Մոտոցիկլետներ (ներառյալ մոպեդներ) և հեծանիվներ՝ օժանդակ շարժիչներով, սայլակներով և առանց դրանց	1 հատ
8712 00	Երկանիվային հեծանիվներ և այլ հեծանիվներ (ներառյալ երեք անիվային հեծանիվներ՝ բեռ տեղափոխելու համար)՝ առանց շարժիչի	1 հատ
8713	Շարժվելու անընդունակ մարդկանց համար սայլակներ, սարքավորված կամ չսարքավորված շարժիչով կամ տեղափոխման համար այլ մեխանիկական սարքերով	1 հատ
8715 00 100	Մանկական սայլակներ	1 հատ
8716	Կցասայլեր և կիսակցասայլեր՝ ոչ ինքնաշարժ տրանսպորտային միջոցներ	1 հատ

3) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«ԱՏԳ ԱԱ 8702, 8704, 8705, 8716 ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրերին դասվող ապրանքների ակնհայտ առևտրային քանակության չափերը վերաբերվում են միայն «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի կիրառման դեպքերին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. օգոստոսի
Երևան